ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻԳՐԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի
Միգրացիոն
Ծառայություն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԱՎԵՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԹԻՎԸ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՋԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

## վիճակագրական հաշվետվություն

ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻԳՐԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, 0037 Կ. Ուլնեցու 31
Հեռ.՝ (+37460) 275-036
Էլ. փոստ՝ migrationservice.sms@mta.gov.am

Հայաստանի Միգրացիոն Ծառայություն

# Վավեր ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թիվը տարեվերջի դրությամբ ըստ քաղաքացիության երկրների և կարգավիճակի տրման հիմքերի

առ 31.12.2015թ.

| Քաղաքացիության երկիրը | Ընդամենը | Այդ թվում՝ ըստ կարգավիճակի տրման հիմքերի | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ընտանիքի հետ միավորվելը | ուսումը | աշխատանքը | ձեռնարկատիրական գործունեությունը | ազգությամբ հայ լինելը |
| Հնդկաստան | 1092 | 21 | 717 | 354 | 0 | 0 |
| Իրան | 744 | 143 | 383 | 178 | 39 | 1 |
| ՌԴ | 247 | 97 | 61 | 79 | 0 | 10 |
| Ուկրաինա | 188 | 105 | 20 | 58 | 0 | 5 |
| ԱՄՆ | 176 | 26 | 11 | 137 | 0 | 2 |
| Իրաք | 122 | 5 | 101 | 15 | 1 | 0 |
| Իսրայել | 118 | 5 | 110 | 3 | 0 | 0 |
| Սիրիա | 114 | 56 | 22 | 16 | 0 | 20 |
| Վրաստան | 85 | 23 | 25 | 33 | 0 | 4 |
| Իսպանիա | 53 | 1 | 6 | 46 | 0 | 0 |
| Իտալիա | 49 | 4 | 7 | 37 | 1 | 0 |
| Ֆրանսիա | 46 | 17 | 2 | 26 | 0 | 1 |
| Գերմանիա | 44 | 9 | 8 | 27 | 0 | 0 |
| Ֆիլիպիններ | 43 | 4 | 0 | 39 | 0 | 0 |
| Լիբանան | 42 | 4 | 21 | 16 | 0 | 1 |
| Չինաստան | 40 | 9 | 3 | 28 | 0 | 0 |
| Այլ երկրներ | 533 | 134 | 208 | 185 | 0 | 6 |
| **Ընդամենը** | **3736** | **663** | **1705** | **1277** | **41** | **50** |

ՀՀ ՏԿԵՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ք. Երևան, 0037 Կ. Ուլնեցու 31 Հեռ.՝ (+37460) 275-036 Էլ. փոստ՝ migrationservice.sms@mta.gov.am

# Վավեր մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թիվը տարեվերջի դրությամբ ըստ քաղաքացիության երկրների և կարգավիճակի տրման հիմքերի

Հայաստանի Միգրացիոն Ծառայություն

առ 31.12.2015թ.

| Քաղաքացիության երկիրը | Ընդամենը | Այդ թվում՝ ըստ կարգավիճակի տրման հիմքերի | | |
|---|---|---|---|---|
| | | առնվազն 3 տարի բնակվելը | ձեռնարկատիրական գործունեությունը | ազգությամբ հայ լինելը |
| ՌԴ | 1634 | 1242 | 1 | 391 |
| Իրան | 593 | 537 | 14 | 42 |
| Սիրիա | 430 | 322 | 0 | 108 |
| Վրաստան | 420 | 327 | 2 | 91 |
| Ուկրաինա | 372 | 286 | 0 | 86 |
| ԱՄՆ | 340 | 286 | 0 | 54 |
| Լիբանան | 116 | 83 | 1 | 32 |
| Թուրքմենստան | 75 | 61 | 0 | 14 |
| Գերմանիա | 61 | 55 | 1 | 5 |
| Հնդկաստան | 61 | 61 | 0 | 0 |
| Ֆրանսիա | 49 | 39 | 1 | 9 |
| Կանադա | 46 | 41 | 0 | 5 |
| Ղազախստան | 46 | 33 | 0 | 13 |
| Հունաստան | 45 | 40 | 0 | 5 |
| Բելառուս | 35 | 25 | 0 | 10 |
| Ուզբեկստան | 32 | 26 | 0 | 6 |
| Այլ երկրներ | 354 | 317 | 1 | 36 |
| **Ընդամենը** | **4,709** | **3,781** | **21** | **907** |

ՀՀ ՏԿԵՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ք. Երևան, 0037 Կ. Ուլնեցու 31 Հեռ.՝ (+37460) 275-036 Էլ. փոստ՝ migrationservice.sms@mta.gov.am

Հայաստանի Միգրացիոն Ծառայություն

# Վավեր հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թիվը տարեվերջի դրությամբ ըստ քաղաքացիության երկրների և կարգավիճակի տրման հիմքերի

առ 31.12.2015թ.

| *Քաղաքացիության երկիրը* | *Ընդամենը* | *Այդ թվում՝ ըստ կարգավիճակի տրման հիմքերի* | |
|---|---|---|---|
| | | *տնտեսական կամ մշակութային գործունեությունը* | *ազգությամբ հայ լինելը* |
| Իրան | 2687 | 0 | 2687 |
| ԱՄՆ | 1560 | 8 | 1552 |
| Սիրիա | 1305 | 4 | 1301 |
| Իրաք | 569 | 0 | 569 |
| Ֆրանսիա | 437 | 6 | 431 |
| Լիբանան | 358 | 2 | 356 |
| Կանադա | 245 | 0 | 245 |
| ՌԴ | 167 | 4 | 163 |
| Միացյալ Թագավորություն | 153 | 1 | 152 |
| Գերմանիա | 138 | 7 | 131 |
| Եգիպտոս | 137 | 1 | 136 |
| Թուրքմենստան | 131 | 1 | 130 |
| Թուրքիա | 104 | 1 | 103 |
| Ավստրալիա | 84 | 1 | 83 |
| Նիդերլանդներ | 76 | 2 | 74 |
| Հորդանան | 61 | 0 | 61 |
| Այլ երկրներ | 493 | 15 | 478 |
| **Ընդամենը** | **8705** | **53** | **8652** |

ՀՀ ՏԿԵՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ք. Երևան, 0037 Կ. Ուլնեցու 31 Հեռ.՝ (+37460) 275-036 Էլ. փոստ՝ migrationservice.sms@mta.gov.am

Հայաստանի
Միգրացիոն Ծառայություն

# Պարզաբանումներ

***Համաձայն ՀՀ «Օտարերկրացիների մասին» օրենքի Հոդված 14-ի կետ 1-ի օտարերկրացիների համար սահմանվում են կացության հետևյալ կարգավիճակները. ա) ժամանակավոր. բ) մշտական. գ) հատուկ:***

Նույն օրենքի Հոդված 15-ի 1-ին կետի համաձայն ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում մեկ տարի և ավել ժամկետով իր բնակվելը հիմնավորող հանգամանքներ:
Այդպիսի հանգամանքներ կարող են լինել`
ա) ուսումը,
բ) աշխատանքի թույլտվության առկայությունը,
գ) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ զավակը լինելը, կամ
դ) Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգականը (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) լինելը, կամ
ե) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը.
զ) ազգությամբ հայ լինելը:

*Սույն վիճակագրական հաշվետվության մեջ Գ և Դ հիմքերով ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած անձանց թիվը ներկայացված է միասնական` որպես «Ընտանիքի միավորման» հիմք:*

Նույն օրենքի Հոդված 16-ի 1-ին կետի համաձայն 1. Մշտական կացության կարգավիճակը տրվում է օտարերկրացուն, եթե նա`

ա) ապացուցում է Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող ամուսնու կամ մերձավոր ազգականների (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) առկայությունը, Հայաստանի Հանրապետությունում ապահովված է բնակարանով ու գոյության միջոցներով և մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելն օրենքով սահմանված կարգով առնվազն երեք տարի բնակվել է Հայաստանի Հանրապետությունում կամ
բ) ազգությամբ հայ է կամ Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն:

Նույն օրենքի Հոդված 18-ի 1-ին կետի համաձայն Հատուկ կացության կարգավիճակ տրվում է ազգությամբ հայ օտարերկրացիներին:

Հատուկ կացության կարգավիճակ կարող է տրվել նաև Հայաստանի Հանրապետությունում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող այլ օտարերկրացիների: